ՀՀ Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթեւոսյանի շնորհավորական ուղերձն Ուսուցչի օրվա առթիվ

05.10.2019

Սիրելի ուսուցիչներ,
Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա կապակցությամբ: Այս տոնական օրը եւս մեկ հրաշալի առիթ է մեր երախտագիտությունը ձեզ հայտնելու եւ ձեր վաստակի առջեւ խոնարհվելու համար:

Ինքներդ գիտեք, որ ձեր դերն անփոխարինելի է մեր կյանքում, քանի որ հենց ձեզ է վերապահված սերունդներին կրթելու եւ հայեցի դաստիարակելու պատվաբեր առաքելությունը: Դրանով է պայմանավորված, որ դպրոցը՝ ի դեմս ձեզ, շարունակում է մնալ պետության եւ ժողովրդի ապագան կերտող դարբնոցը:

Սիրելի մանկավարժներ,
Մենք ապրում ենք գիտելիքի եւ տեղեկատվության գերհագեցած դարաշրջանում: Մեր սերունդների հետագա նվաճումները, ձեռքբերումներն ինչպես մեր երկրում, այնպես էլ նրա սահմաններից դուրս պայմանավորած են նրանով, թե որքանով ձեզ կհաջողվի նրանց տանել տեղեկատվության եւ գիտելիքի անսպառ հոսքին համընթաց:

Հավատացած եղեք, որ այդ գործընթացի լիարժեք եւ անխափան ապահովումը մերօրյա կարեւորագույն հրամայականն է: Քանզի պետք է գիտակցենք, որ չունենալով ժամանակակից գիտելիքներով հարուստ եւ բազմակողմանի զարգացած սերունդ՝ մենք չենք կարող քաղաքակիրթ ազգերի շարքում ունենալ մեր տեղը եւ համարժեք արձագանքել ժամանակի մարտահրավերներին:

Կրկին շնորհավորում եմ բոլորիդ այս գեղեցիկ օրվա առթիվ՝ ցանկանալով քաջառողջություն, անձնական երջանկություն եւ աշխատանքային անսպառ եռանդ՝ Ձեր հայրենանվեր եւ ազգապահպան առաքելությունը շարունակելու պատվաբեր գործում: